ԼՈՌԻՆ XVIII Դ. ՎԵՐՋԻՆ – XIX Դ. ՍԿԶԲԻՆ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Ինչպես հայտնի է, XVIII դ. Անդրկովկասի ժողովուրդների կյանքում և մասնավորապես հայ ժողովրդի պատմության մեջ ազգային-ազատագրական գաղափարախոսության ու շարժումների վերելքի ժամանակաշրջան էր՝ արտահայտված բազմաթիվ առաջարկվող ծրագրերի ու բանակցությունների տեսքով: Ազգային-ազատագրական ծրագրերում թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման գործը դիտվել է վրաց և ռուս ժողովուրդների դաշինքի ու փոխօգնության և նրանց կողմից ռազմական աջակցության հետ շաղկապված, մանավանդ որ այդ ժամանակաշրջանում Քարթլի-Կախեթի թագավորության տարածքի մեջ էր մտնում Լոռվա տարածաշրջանը՝ բացառապես հայ բնակչությամբ[1]: Այդ էր պատճառը, որ հայ հասարակական-քաղաքական գործիչները ազատագրական ծրագրերում էական տեղ էին հատկացնում Վրաստանի դիրքորոշմանը, հույսեր կապում այնտեղից ստացվելիք օժանդակության ու օգնության հետ և ըստ այդմ էլ փորձում օժանդակել վերջինիս տնտեսական ու քաղաքական հզորացմանը[2]: Ուստի, զարմանալի չէ, որ Հերակլ II թագավորի օրոք (1744-1798 թթ.) հայերը Վրաստանում ազդեցիկ դեր էին խաղում և պատասխանատու պաշտոններ զբաղեցնում արքունիքում ու զորքի մեջ: Բնականաբար, վրաց արքունիքում յուրահատուկ վերաբերմունք էր մշակվելու հայերի նկատմամբ, որի մեջ, սակայն, առաջնային էին Վրաստանի շահերը: Վերջինս ձգտում էր իր շահերին համապատասխանեցնել հայերի ծրագրերը և դրանցից հմտորեն ընտրում էր այն կետերը, որոնք ձեռնտու էին իրեն:

Այդ ժամանակաշրջանում ծանր էր Լոռվա տնտեսական ու քաղաքական վիճակը: Մինչ այդ, Շահ Աբասի (1604), Դաղստանի լեռնաբնակների (1719), Նադիր շահի (1736) և լեզգի Օմար խանի (1772) կատարած ասպատակիչ արշավանքներից խիստ տուժել էր ողջ Փամբակաձորի հովիտը, նվազել էր Լոռու, Փամբակի, Ղազախի և Շամշադինի բնակչությունը[3]: Տագնապած ժողովրդի մի մասն սկսեց գաղթել

---

[1] А. И о а н н и с я н. Россия и армянское освободительное движение в 80-х годах XIX столетия. Ереван, 1990, с. 10; о н ж е. Иосиф Эмин. Ереван, 1989, с. 118.

[2] *Պ. Հ ո բ ա ն յ ա ն. Հնդկահայ գաղթօջախի պատմությունից,– ՊԲՀ, 1988, № 1, էջ 183:*

[3] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 4331, թթ. 130-164, ձեռ. № 4463, թթ. 15-17, 22-26, Դիւան Հայոց պատմութեան, կազմեց Գ. Աղանեանցը, գիրք Դ, Թիֆլիս, 1894, էջ 717, Լ ե ռ. Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1973, էջ 116-117, Ռ. Տ ի տ ա ն յ ա ն. Հայկական աղբյուրները Աղա-Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-97 թթ.), Երևան, 1981, էջ 227, Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 207:*

դեպի այլ տարածաշրջաններ: Այսպիսին էր վիճակը, երբ Գեորգինսկ ամրոցում ստորագրված դաշնագրով (1783 թ. հուլիսի 24) Հերակլ II-ը ընդունում է Ռուսաստանի հովանավորությունը[4]: Դրանից հետո հայ-վրացական հարաբերությունները սկսեցին ընդլայնվել: Իրավիճակը Լոռիում, սակայն, չփոխվեց, և երբ դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո լեզգիները՝ Օմար խանի գլխավորությամբ, կրկին արշավեցին Վրաստան, Լոռին մնաց առանց պաշտպանության: Լեզգիները պաշարեցին Գյումուշխանա կոչվող բերդը, ավերեցին ու թալանեցին Ախթալայի պղնձահանքը, ասպատակեցին շրջակա հայկական գյուղերը և հեռացան Ախալքալաք՝ տանելով մոտ հազար գերի, որոնց մեծ մասը պղնձահանքերում աշխատող հույներ էին[5]: Հերակլ II-ը զանազան կողմերից հայ բնակիչներ էր տեղահանում և բնակեցնում Սոմխեթում (Բոլնիս և այլ վայրեր), Թիֆլիսում: Այս վերաբնակեցումների արդյունքում ստեղծվեց Շուլավեր գյուղը[6]: 1795 թ. Անդրկովկաս արշավեց պարսից Աղա-Մահմադ խանը: Նրա ավերիչ արշավանքների հետևանքով բնակչությունը չկարողացավ տնտեսությամբ զբաղվել. սկիզբ առավ գաղթի մի նոր ալիք, որից զերծ չմնաց Լոռին. «…բազում Հայք ի Տաւուշայ (Շէմշէդին) և ի Ղազախայ ամենայն գերդաստանեօք անցեալ ընդ Կուր գետ ամրացան ի Վրաստան, յորոց բազումք ոչ ևս դարձան անտի մինչև ցայսօր, որոց զորդիքս և զթոռունս իշխանք և ազնուականք վրաց արարին իւրեանց իբրև արծաթագին ծառայ (ճորտ), որք մինչև ցայսօր կան մնան ի նոյն անկապ կապանս տոռանց: Եւ իբրև այսպէս դատարկացաւ ի բնակչաց երկիրն Գագայ, Կողբոփորայ, Ծոբոփորոյ և Սօմխէթի…»[7]: Աղա Մահմադ-խանի արշավանքներից հետո դեպի Լոռու ամայացած վայրերն են ուղղվում Ղարաբաղից դուրս եկած հայերը[8]:

Գեորգինյան դաշնագիրը նոր հույսեր ներշնչեց հայ ազատագրական շարժման գործիչներին: Դրա որոշ կետեր հայ ժողովրդի ազատագրական շարժումներին ծառայեցնելու միջոցներ էր փնտրում նաև հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը, որը նամակագրական ակտիվ կապերի մեջ էր XVIII դարի վերջին քառորդի պետական, հասարակական-քաղաքական այնպիսի խոշոր դեմքերի հետ, ինչպիսիք էին հայոց Սիմոն և Ղուկաս կաթողիկոսները, վրաց Հերակլ II թագավորը և նրա որդիները, Լազարյաններն ու ռուսական արքունիքը, Ղարաբաղի մելիքները, Հովսեփ Արղությանը և ուրիշներ[9]: Նա հատկապես շեշտում էր դաշնագրի 6-

---

[4] Акты собранные Кавказской археографической комиссией (*այսուհետև՝* АКАК). Т. 1, Тифлис, 1866, с. 95; Г. П а й ч а д з е. Георгиевский трактат, договор 1793 года о вступлении Восточной Грузии под покровительство России. Тифлис, 1983, с. 80-81.

[5] *Լ. ե ռ. նշվ. աշխ., էջ 360, Ե. Լ. ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 488:*

[6] *Լ. ե ռ. Սահմանավեճեր, Աթենք, 1990, էջ 48:*

[7] *ՄՄ, ձեռ. № 4331, թթ. 130-164:*

[8] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 53, ց. 1, գ. 3385, թթ. 14, 15, 19, Լ. Մ ե լ ի ք ս ե թ - բ ե կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. գ., Երևան, 1955, էջ 144:*

[9] *Ռ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրությունը.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 3, էջ 127:*

րդ կետը և կոչ անում ընդլայնել Հայաստանի նկատմամբ Վրաստանի իրավունքներն ու առաջ քաշել հայ-վրացական պետության ձևավորման հարցը:

Վրաց արքունիքի հետ Շահամիրյանը նամակագրական կապեր ուներ դեռևս 1770-ական թվականների սկզբներից: Իր նամակներում Շահամիրյանը, ի թիվս այլ հարցերի, քննարկել է նաև հայ-ռուսական և հայ-վրացական փոխհարաբերությունների հարցը: Դժբախտաբար, Շահամիրյանի՝ զանազան անձանց ուղարկած նամակներից մի աննշան մասն է հասել մեզ: Հայտնի են նրա երեք նամակները. առաջինը վրաց Հերակլ II թագավորին գրած նշանավոր ուղերձն է (1787 թ. նոյեմբերի 15-ին)[10], երկրորդը՝ 1779 թ. հունվարի 2-ին Արցախի Հովհաննես կաթողիկոսին և երրորդը՝ հայոց Ղուկաս կաթողիկոսին գրած նամակներն են[11]: Հայրենասեր գործիչը նվերների անվան տակ հաճախակի գումարներ էր տրամադրում ոչ միայն վրաց թագավորին, այլ նաև նրա արքունիքի հայազգի իշխանավորներին՝ ցանկանալով նրանց դրականապես տրամադրել իր ծրագրերի նկատմամբ[12]: Նման մեծահարուստին Վրաստան բերելն այնքան էր ձեռնտու Հերակլ արքային, որ վերջինս իր որդուն՝ գահաժառանգ Գեորգիին, համոզեց Շամիր աղային (Շահամիրյանին) նվիրաբերել Լոռու ողջ տափաստանը՝ որպես հին հայկական տարածքի մի մաս (Լոռին այդ ժամանակ գտնվում էր Վրաստանի տիրապետության տակ): 1775 թ. հրապարակվում է Հերակլ II-ի հրովարտակը՝ Լոռու գավառը՝ որպես ժառանգական տիրույթ Շահամիրյանին նվիրաբերելու մասին, իսկ շնորհագիրը Հնդկաստան տանելու գործը հանձնարարվում է Հովսեփ Դանիբեկյանցին[13]: Կատարելով հոր ցանկությունը՝ Գեորգին 1790 թ. նոյեմբերի 16-ի հատուկ հրովարտակով Լոռին նվիրաբերեց Շամիր աղային՝ որպես հավերժ ու ժառանգական տիրույթ: Նվիրաբերված երկրի սահմաններն էին. արևելքից՝ Շամլուղի լեռը, արևմուտքից՝ Կարաղաջի, հարավից՝ Դվալի և հյուսիսից՝ Եղվարի (Լեգվեր) լեռները: Հրովարտակին կցված էր նաև բավականին հմտորեն կազմված տեղանքի քարտեզ: Ճանապարհվելով

1791 թ. մայիսին՝ Հ. Դանիբեկյանցը Հնդկաստան է հասնում մոտ մեկ տարի հետո և Շահամիրյանին հանձնում հիշյալ հրովարտակն ու քարտեզը:

Փաստորեն, հայ հասարակական-քաղաքական գործիչները շարունակում էին թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման գործը դիտել վրաց և ռուս

---

[10] *Սա առաջին անգամ հրատարակել է Սրբուհի Երիցյանը՝ «Փորձ» ամսագրում, ապա՝ վերահրատարակել է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանը: Հետագայում այդ նամակի ընդօրինակությունը հայտնաբերվել է ՄՄ, № 2949 ձեռագրում: Այս մասին տե՛ս Ռ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 127, 133-137, տե՛ս նաև Ս. Վ. Տ ե ր - Ա վ ե տ ի ս յ ա ն. Նյութեր Հնդկաստանի հայ գաղթօջախի պատմության համար (Շահամիր աղա Շահամիրյանի, Ղուկաս կաթողիկոսի և վրաց Հերակլ 2-րդ թագավորի գրագրությունները).– Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հ. 13, Երևան, 1940, էջ 90-99:*

[11] *Ռ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 128-133:*

[12] *Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 18, Պ. Հ ո բ ա ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 183:*

[13] *Պ. Հ ո բ ա ն յ ա ն. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 81:*

ժողովուրդների հետ դաշինքի ու ռազմական համատեղ գործողությունների հետ շաղկապված: Վրաց արքունիքն իր շահերին էր ծառայեցնում հայերի ազգային նպատակները, և այդ գործում, ինչպես տեսնում ենք, ամենագործնականը Հերակլ II-ն էր: Վրաց կառավարությանը ձեռնտու էր, որ Լոռվա հարուստ լեռնաշխարհը, որն ավերվել ու ամայացել էր լեզգիների ու այլ լեռնականների հաճախակի ասպատակություններից, նորից կենդանանար: Այդ ժամանակաշրջանը համընկավ Ղարաբաղի ժողովրդի՝ իր երկրից տարբեր կողմեր գաղթելու հետ, և կարելի էր նրանց բնակեցնել այս վայրերում ու իրագործել այդ ծրագրերը, որոնք բխում էին նաև Շահամիրյանի պլաններից: Վերջինս 1790 թ. գրում է Ղուկաս կաթողիկոսին, որ մտադիր է Լոռի քաղաքն իր գավառով տալ Ղարաբաղի Մելիք-Աբովին, որին նա անվանում էր սիրեցյալ, և որը երկրից հեռացած իր ժողովրդի հետ կհաստատվեր Լոռիում: Շահամիրյանը առաջարկում է Հերակլին՝ իրագործելու իր այդ ծրագիրը: Մի քանի տարի անց թագաժառանգ Գեորգին հայտնում է Շահամիրյանին, թե Մելիք-Աբովը չի կամենում ապրել Լոռիում. «…Բայց, զորս սակս Մելիք Ապօվին փոխանորդութիւնս էիր գրեալ և զպայմանագիրս առաքեալ, այն գրեանքն յոյժ անագան հասին մեզ, և մինչ եհաս, իսկոյն՝ սոյն այս մեր և ձեր հաւատարիմ Տէր Դաւիթ, որ է խոստովանահայր Մելիքմ Ապօվին, և ի քաղաքացւոց մինն ի յառաջին անձանց, Մունթօյենց Յովսէփին, հանդերձ ի ձենջ առաքեալ պայմանագրովք և այլոք թղթովք, առաքեալ եմ առ Մելիք Ապօվ սիրելին Ձեր, և որպես կամեցողութիւն Ձեր եղեալ է, յայտնեալ եմք նմա և հրաւիրեալ, և նա ոչ յանձն է առեալ և ոչ ընկալեալ, այլ ի յերկիրն իւր գնացեալ»[14]: Գեորգին համոզում էր, որ ինքը՝ Շահամիրյանը գա, տիրի այդ հողին. «…զայս հարկաւոր համարիմ, գրել քեզ և ասել, զի Տէր Դաւիթն արզ արար մեզ զդիտաւորութիւն ձեր, որ յաղագս Լօռոյ գաւառին, զոր շնորհեալ եմք պայծառութեան ձերում, ես ի բոլոր սրտէ որպէս և զգրուածսն իմ ունիք ի ձեռս ձեր շնորհեալ եմ, մինչ զի զայս ևս ասեմ, եթէ Դու և կամ զմի ի յորդւոց Քոյ և յորդւոց որդիսն Քո գան առ մեզ, ես բազում այս ևս ձեզավայել ողորմութիւնս և զսէրս ցուցանեմ…»[15]:

Գեորգի թագաժառանգը 1796 թ. մայիսի 10-ին գրած նամակում նաև տեղեկացնում էր Աղա-Մահմադ խանի կողմից Թիֆլիսն ավերելու, ռուսական զորքերի Կովկաս գալու մասին և Լոռի գավառի վերաբերյալ Շահամիրյանից նոր կարգադրություններ էր պահանջում: Նամակը Հնդկաստան՝ Շահամիր Շահամիրյանին էր տանելու դարձյալ Հովսեփ Դանիբեկյանցը իր հաջորդ՝ 5-րդ ճանապարհորդության ժամանակ, որն սկսվեց 1796 թ. մայիսի վերջերին: Հովսեփը դեռևս Հնդկաստանում էր գտնվում, երբ Հերակլ II-ի և Գեորգիի կարգադրությամբ իր որդին՝ Ռաֆայելը Դանիբեկյանցի (Դանիբեգով), 1797 թ. գարնանը ճանապարհվում է Հնդկաստան՝ տանելով Գեորգիի նոր նամակը Շահամիրյանին: Ռ. Դանիբեգովը այդ ճանապարհորդության մասին վկայում է 1797 թ. ապրիլի 3-ի իր ստացականում նշելով, որ ինքը «...Պատրաստվում է ճանապարհվելու Հնդկաստան Շահամիր-աղայի մոտ, որի

[14] *ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 250:*
[15] *Նույն տեղում:*

համար նա Գորիում 60 ռուփի և այլ հնդկական դրամ է վերցնում Տեր-Դավիթ քահանայից՝ գրավ դնելով Թիֆլիսում իրենց Վանքի այգին»[16]: Ռ. Դանիբեգովը Հերակլի կողմից ուներ հստակ հանձնարարություն, այն է. «Մադրասում ապրում էր հարուստ հայ, որը ամեն տարի Հերակլին նվերներ էր ուղարկում: Արքան, որպես պարգևատրում, նրան է տալիս մեծ Լոռի գյուղը և ամրոցը, որի մասին հաղորդում է իմ միջոցով...»[17]: Շահամիր Շահամիրյանի և նրա տոհմի՝ Վրաստանում ունենալիք իրավունքների ու պարտավորությունների ճշգրտման նպատակով Հերակի II-ը 1797 թ. նոյեմբերի 20-ին Հնդկաստան է առաքում մի նոր հրովարտակ: Նման հրովարտակի անհրաժեշտությունը թելադրված էր, հավանաբար, այն տարակուսանքներով, որ արտահայտում էր Շ. Շահամիրյանը Մանուչար Թումանյանին գրած իր նամակի մեջ[18]: Ուշագրավ է, որ Շահամիրյանի մահվան (1797) լուրը Վրաստանում դեռևս հայտնի չէր, և հրովարտակը գրվել է նրա անունով:

1798 թ. ամռան սկզբներին հասնելով Հնդկաստան՝ Ռաֆայել Դանիբեգովը վախճանված է գտնում Շ. Շահամիրյանին և Գեորգիի նամակը հանձնում է Հովհաննես Շահամիրյանին. «Գալով Մադրաս՝ ես կենդանի չգտա այդ հային, նա մահացել էր իմ գալուց մեկ տարի առաջ, ես հիշյալ նամակը հանձնեցի նրա որդուն, որն այդ ժամանակ գտնվում էր Մադրասում»[19]:

Շահամիր Շահամիրյանի ժառանգները չեկան տիրանալու իրենց հայրենական սեփականությանը:

1801 թ. սեպտեմբերի 12-ին Վրաստանը Ռուսաստանին միավորվելու մասին Ալեքսանդր I-ի հռչակագրի ընդունումից հետո Քարթլի-Կախեթը դարձավ ռուսական կայսրության վարչատարածքային միավորներից մեկը: Քարթլի-Կախեթի հետ Ռուսական կայսրության մեջ միավորվեցին նաև հյուսիսային Հայաստանի Լոռի-Փամբակ, Բորչալու և Շամշադին երկրամասերը[20]: Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո Լոռին դարձավ արքունական կալվածք[21]:

---

[16] Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие страны Азии (1795–1827). М., 1962, с. 68.

[17] *Նույն տեղում, էջ 15:*

[18] *Այդ վավերագրի վրացերեն ինքնագիրը Լոնդոնում ձեռք է բերել լոնդոնաբնակ Վրեժ Ներսիսյանը և նվիրել Մաշտոցի անվան Մատենադարանին: Այս մասին և վավերագրի հայերեն թարգմանությունը տե՛ս Պ. Զ ո ր ա ն յ ա ն. Հնդկահայ գաղթօջախի պատմությունից, էջ 183-184:*

[19] *Նույն տեղում, էջ 15:*

[20] АКАК, т. VI, ч. I. Тифлис, 1877, с. 467; История Грузии, т. 1, Тифлис, 1961, с. 402-406, *Զ. Կ ո ր կ ո տ յ ա ն. Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին 100-ամյակում (1831-1931 թթ.), Երևան, 1932, էջ 26,* А. Р. И о а н н и с я н. Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия. Ереван, 1958, с. XXIV; *Լ. ե ռ. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 7,* Присоединение Восточной Армении к России. Сборник документов под ред. Ц. П. Агаяна и В. А. Дилояна, т. 1 (1801-1813 гг.). Ереван, 1972, с. 7; *Վ. Բ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Վ. Կ. Ո ս կ ա ն յ ա ն. Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 186:*

[21] *Լ. ե ռ. Հայոց պատմություն, էջ 382-383:*

Վրաստանի միավորումը Ռուսաստանին նշանավորեց ցարական Ռուսաստանի քաղաքականության նոր կուրսը Անդրկովկասում, իսկ այդ քաղաքականության շահերը պահանջում էին, որ պետության արևելյան սահմանները պարսիկների ու թուրքերի հարձակումներից զերծ պահելու համար ստեղծվեր հայ-վրացական միացյալ, ամուր գոտի: Ուստի, Կովկասում տեղակայված ռուսական զինվորական հրամանատարության կողմից սկսվեց կիրառվել քաղաքական ծրագիր՝ Հյուսիսային Հայաստանի ամայացած շրջանները Արևմտյան Հայաստանի, Ջավախքի ու Ղարաբաղի հայության հաշվին վերաբնակեցնելու: Այդ քաղաքականության արդյունքում Լոռիում սկսեցին հաստատվել ղարաբաղցիները, որոնց գաղթը մեծ չափեր ընդունեց հատկապես Խամսայի մելիքությունների կործանումից հետո: Իրենք՝ պարտված մելիքներն էին ժողովրդի մի մասին հանում երկրից և, ռուսական կառավարության ցուցումով, տանում իրենց հետ Վրաստան, ուր նորեկ գաղթականները բնակություն էին հաստատում հիմնականում Լոռիում:

Լոռին վերաբնակեցնելու ռուսական կառավարության որոշումն ինքնանպատակ չէր, այն բխում էր Ռուսաստանի արտաքին քաղաքական շահերից. նախ, ինչպես ռազմական մինիստրին գրած իր զեկուցագրում գրում է գեներալ Ֆ. Պաուլուչչին, տեղում հողագործությանն ու անասնապահությանը զարկ տալու դեպքում մեծ շահույթ կգա պետական գանձարանին, քանի որ այդ գաղթականները մի քանի տարի հետո գանձարանին պետք է վճարեին Վրաստանի բնակիչներին հավասար հարկեր: Երկրորդ՝ այդ ամայի տարածքը, որ Փամբակը բաժանում է Վրաստանից, սահմանակից լինելով Ախալցխային ու Կարսին, հաճախ ծառայում էր որպես ավազակների ապաստարան: Թաքնվելով այստեղ՝ հրոսակախմբերը ավարառու հարձակումներ էին գործում նաև Բորչալուի տարածք, իսկ շատ տեսանկյուններից հարմար այդ հողերում գաղթականներ բնակեցնելով՝ Փամբակի հետ հաղորդակցությունը կդառնար անվտանգ և վերջ կտրվեր ավազակների Վրաստան ներթափանցելուն: Բացի այդ, Լոռու տարածքում կային պղնձահանքեր, որոնց շահագործմամբ խիստ շահագրգռված էր ցարական կառավարությունը:

Այդ ընթացքում Ղարաբաղի մելիքները մի կողմից բանակցություններ էին վարում ռուսական կառավարության հետ՝ վերջինիցս ռազմական օգնություն ստանալու ակնկալիքով, մյուս կողմից՝ պայքար էին մղում արտաքին թշնամիների դեմ: Ղարաբաղի Իբրահիմ խանը ուշադիր հետևում էր դեպքերի ընթացքին: Նրան հայտնի էր, որ վրաց Հերակլ թագավորը գաղտնի բանակցություններ է վարում հայ մելիքների հետ և ամեն կերպ ձգտում էր խոչընդոտել դրան:

Ռուսաստանի խոստացած օգնությունը չհասավ, իսկ Խամսայի հինգ մելիքներից երկուսը՝ Մելիք-Բեգլարյան Մելիք-Աբովը և Մելիք-Իսրայելյան Մելիք-Մեջլումը գնացին Թիֆլիս: Իբրահիմ խանը հասավ իր նպատակին. Ղարաբաղի մելիքները, թեև վայելում էին իրենց վաղեմի արտոնությունները, սակայն շահի ստորադասներն էին համարվում բացի Վարանդայի Մելիք-Շահնազարից: Երկու մելիքները՝ Մեջլումը և Աբովը, դարձյալ իրենց հույսը չէին կտրում Ռուսաստանից և խնդրում էին վերջինիս միջնորդությունը՝ որ թույլ տրվի իրենց տեղափոխվել

Կասպից ծովի ափերը[22]: Հետագայում Մելիք-Աբովը գնաց Բոլնիս, ուր սկսեց իր շուրջը համախմբել ցրված ժողովրդին: Մելիքների բացակայության ժամանակ նրանց անտեր մնացած հողերն ու գյուղերը խանն սկսել էր կամայականորեն բաժանել, քանի որ տեղի նշանավոր և հիմնական ուժերը ցրիվ էին եկել օտար երկրներում: Մելիք-Մեջլումն էլ շուտով մահանում է, և նրա հպատակները բնակություն են հաստատում Գանձակում[23]: Այս ամենը, ինչպես նաև այլ հանգամանքներ (Մելիք-Աբովը իր ռուսական կողմնորոշման համար զրկվել էր մելիքությունից ու ենթարկվում էր հալածանքների) ստիպեցին, որ 1799 թ. Մելիք-Աբովը դարձյալ թողնի հայրենիքը (1795 թ. նա, հաշտվելով Իբրահիմ խանի հետ, վերադարձել էր Ղարաբաղ) և իր հպատակ բնակչության հետ տեղափոխվի Վրաստան, ուր Գեորգի XII թագավորը նրան Բորչալուի ուղեմասում տվեց Աղբյորփի գյուղը. «…Եւ մէլիք Ապովն ևս քանի հարիւր տուն ժողովրդովք իւրովք չու արար ի տունն Վրաց և կայ այժմ ի Պօլնիսու ձոր կոչեցեալ գաւառին»[24]: Մելիք-Աբովը իր աշխարհազորայիններով շարունակեց պայքարը պարսից խաների դեմ: Գեորգի XII-ը 1800 թ. հունիսի 1-ին անգամ հատուկ հանձնարարություն տվեց նրան՝ Աղբյորփիում և շրջակայքում վերահսկողություն սահմանել այդ վայրերով անցնող վաճառականների քարավանների անվտանգության համար[25]:

Պավել I-ի (1796-1801 թթ.) գահակալությունից հետո ռուսաց կառավարության քաղաքական հայացքները Անդրկովկասի նկատմամբ փոխվեցին: Վրաստանն այլևս ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ ռուսական մի նահանգ: Այդ էր պատճառը, որ երբ Ղարաբաղի երկու իշխանները՝ Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը և Մելիք-Բեգլարյան Մելիք-Ֆրեյդունը ցանկություն հայտնեցին իրենց հպատակ ժողովրդով հաստատվել Վրաստանում և անբարյացակամ վերաբերմունքի արժանացան Հերակլի ու նրա հաջորդ Գեորգիի կողմից, ապա վերջիններից վիրավորված, չկամեցան նրանց հետ բանակցություններ վարել և ուղղակի գնացին Սանկտ Պետերբուրգ՝ Պավել 1-ին կայսրին անձամբ ներկայացնելու նրան իրենց խնդրանքը. այն է՝ 1) Ղարաբաղը ընդունել կայսերական հովանավորության և իշխանության տակ, 2) զորք ուղարկել, որի օգնությամբ հնարավոր կլիներ հնազանդեցնել մելիքներին հպատակ հայերին և սանձել մահմեդականներին: Ապա նրանք իրենց խնդրագրում նշում են. «Եթե այս երկու խնդիրներն էլ անհաճո կլինեն Ձերդ կայսերական մեծությանը, այն ժամանակ գոնե շնորհ արեք հրամայելու վրաց թագավորին, որ տա մեզ բնակության համար իր իշխանության տակ գտնվող հողը, որ հնում Գուգարք էր կոչվում, իսկ այժմ՝ Ղազախ և տարածվում է մինչև Լոռու գավառը ... Այս բանի համար մենք պարտավոր կլինենք ընդմիշտ ունենալ դեպի Թագավորը ոչ միայն

---

[22] *Ր ա ֆ ֆ ի. Երկեր, հ. 9, Երևան, 1987, էջ 488:*

[23] АКАК, т. 1, с. 123.

[24] *Ռ. Տ ի տ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 97, Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակները Շ. Շահամիրյանին ու նրա հպատակներին.– «Էջմիածին», 2003, թիվ ԺԲ, էջ 71:*

[25] Присоединение Восточной Армении к России, с. 37.

հավատարմություն, այլ ամեն մի դեպքում պաշտպանել և օգնել նրան...»[26]*: Այս բոլոր խնդրանքներն արվում էին այն հույսով, որ ռուսական կառավարությունն առաջվա պես շարունակում էր Անդրկովկասի ժողովուրդներին խոստանալ իր հովանավորությունն ու օգնությունը:*

1798 թ. երկրորդ կեսերից սկսած Արցախի մելիքները սպասման մեջ էին: Նույն թվի դեկտեմբերի 16-ին Վրաստանի դեսպան Գարսևան Ճավճավաձեն ռուսական արքունիք է ներկայացնում Գեորգի XII-ի 11 կետից բաղկացած պահանջները և առաջարկում է Վրաստան առաքել երեք հազարանոց մշտական զորք՝ Վրաստանի պաշտպանության համար, թույլատրել Արցախի մելիքներին հպատակ ժողովրդով գաղթել Վրաստան, տալ նրանց տեղափոխման արտոնություններ, վրաց-պարսկական հարաբերությունները բարելավել և այլն: 1799 թ. հունվարի 7-ին Պետերբուրգից Գրիգոր վարդապետին գրած նամակում Հովսեփ Արղությանը գոհունակությամբ նշում է. «Վրաց բանն ընկալնուլն թագաւորին եւ պատրաստելն զամենայն ըստ խնդրոյ նորին նույնպէս եւ մելիքայն բան՝ լինիլն բարւոք»[27]*:*

1799 թ. փետրվարի 11-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիան պատասխան նոտա է հղում Գարսևան Ճավճավաձեին՝ 1798 թ. դեկտեմբերին նրա առաջադրած պահանջների քննարկման արդյունքների մասին: Գ. Ճավճավաձեին պատասխանում են, որ երեք հազար զորք տրամադրելու պահանջը կկատարվի, հայ մելիքներն իրենց հպատակ ժողովրդով իրավունք կունենան փոխադրվելու Վրաստան:

Թվում էր, թե Անդրկովկասում ռազմական գործողությունների ծավալման համար ամեն ինչ պատրաստ էր, սակայն ժամանակն անցնում էր, իսկ ռուսական զորքերը չէին տեղաշարժվում: Մելիքները 1799 թ. մարտի 29-ին կրկին գրավոր դիմում են Պավել I-ին, հայտնում Բաբա-խանի սպառնալիքների, Արցախում տիրող ծանր կացության մասին և խնդրում արագացնել խոստացած օգնության տրամադրումը[28]*: Ուշագրավ է նաև այն գրությունը, որը ներկայացվել է ռուսական արքունիք՝ մելիքների խնդրագրին ընդառաջելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Այդ վավերագիրը, որ կրում է* ”Замечание на отношения карабахских меликов” *վերնագիրը, պահպանվել է պատճենով և չունի ստորագրություն: Այն պետք է որ կազմված լինի 1799 թ. գարնանը, ըստ որոշ հեղինակների*[29]*, Ս. Լաշկարյովի կողմից (ծագումով վրացի ռուսական պետական գործիչ, որը սերտ կապերի մեջ էր անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների հետ*): *Գրության հեղինակը գտնում է, որ որպես առաջին քայլ պետք է.*

ա) նվերներ ու շքանշաններ հանձնել մելիքներին,

---

[26] АКАК, т. 1, док. № 872, *Լ. ե ռ. Սահմանավեճեր, էջ 49-50, Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ, Թիֆլիս, էջ 7:*

[27] *ՄՄ, ձեռագիր № 2951, թ. 241:*

[28] Армяно-русские отношения в XVIII веке (1760–1800), Сборник документов под ред. М. Г. Нерсисяна, т. IV. Ереван, 1990, с. 501.

[29] *Վ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Զ. Ե կ ա վ յ ա ն. Էջեր հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1996, էջ 175:*

բ) Վրաց թագավորին համոզել նշված տարածքը, այն է՝ Ղազախի գավառը զիջելու հայ մելիքներին (XVIII դ. վերջին բնակչությունից խիստ նոսրացած Ղազախը մտնում էր վրաց թագավորության սահմանների մեջ և տարածվում էր մինչև Դիլիջանի շրջանը),

գ) հայ և վրաց կողմերի միջև պայմանավորվածությանը ձևակերպում տալ հանդիսավոր պայմաններում,

դ) մելիքներին թույլատրել մշտական զորք ունենալ և դրա համար տրամադրել վարկ:

1799 թ. հունիսի 2-ին հրապարակվում է Պավել I-ի հրովարտակը, որով Արցախի մելիքներին թույլատրվում է հպատակ ժողովրդով վերաբնակվել վրացական թագավորության սահմաններում: Հրովարտակին հաջորդում է Պավելի նամակը Վրաց Գեորգի XII-ին (1799 թ. հունիսի 3), որով ծանուցում է մելիքներին հպատակ ժողովրդի հետ Վրաստանում բնակվելու թույլտվության իր որոշման և նրանց տրվելիք որոշակի արտոնությունների մասին: Նամակը մելիքները պետք է ներկայացնեին Գեորգիին: Մելիքները Պետերբուրգից բռնում են տունդարձի ճանապարհը[30]*:*

Փաստորեն, ստացվում է, որ Պավել կայսրը կատարեց մելիքների խնդրանքներից այն, ինչը հեշտ կատարելի էր: 1799 թ. հունիսի 2-ի բարձրագույն հրովարտակով հրահանգեց վրաց թագավորին՝ մելիքներին բնակության համար տալ Ղազախի գավառը, փաստորեն, դրանով նրանց արտոնելով հողեր ստանալ Լոռիում, և թույլ տալ պահպանել իրենց հպատակների նկատմամբ այն իրավունքները, որ ունեին հայրենիքում[31]*: Հրովարտակը գրվեց Վարանդայի իշխան Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի և Գյուլիստանի իշխան Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանի անուններով: Հիշյալ բարձրագույն հրովարտակի բովանդակությամբ կայսրը հրովարտակ ուղղեց նաև վրաց թագավոր Գեորգիին: Վերջինիս 1800 թ. փետրվարի 29-ի Մելիք-Ջումշուդին ուղղված հրովարտակից պարզվում է, որ կայսրը Գեորգիին հանձնարարել է Ղարաբաղից եկած գաղթականներին Լոռիում և հարակից շրջաններում բնակության վայրեր հատկացնել*[32]*: Դեռևս 1798 թ. դեկտեմբերի 21-ին Ս. Լաշկարյովի և հայ մելիքների միջև կայացած զրույցի մասին հաշվետվության մեջ նշվում էր, որ մելիքների այն հարցին, թե՝ «Ո՞ւր կնախընտրեին տեղափոխվել. Վրաստա՞ն, թե՞ Ռուսաստան», պատասխանել են, որ «իրենց համար միևնույն է՝ Ռուսաստանում ապրել թե Վրաստանում, որովհետև և սա նույնպես Ռուսաստանի ենթակայության ներքո է...»*[33]*:*

1800 թ. ապրիլի 16-ին առանձին բարձրագույն հրահանգով Վրաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Պ. Ի. Կովալենսկուն հրամայվեց հետևյալը. «Հայոց մե-

---

[30] *Ա. Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ջավախքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 177:*

[31] Армяно-русские отношения…, т. IV, с. 527.

[32] *Վ. Ա վ ե տ յ ա ն. Շնող, Երևան, 1998, էջ 34:*

[33] *Պ. Հ ո բ ա ն յ ա ն. Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին.– Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Ա, Ս. Էջմիածին, 2006, էջ 384:*

լիքները՝ Ջումշուդ և Ֆրեյդուն ...դիմեցին նորին կայսերական մեծության հովանավորության ներքո և ստացան ամենառողորմած թույլտվություն՝ բնակվելու Վրաստանում, այն պայմանով, որ թագավորը (վրաց Գեորգի XII-ը) պետք է տա նրանց հողեր բնակության համար թե իրանց հպատակների հետ և թե Պարսկաստանի այն բնակիչների հետ, որոնք կարող կլինեն հետո դուրս գալ այնտեղից: Թագավոր կայսրը ցանկանալով, որ մի այսպիսի քրիստոնյա ժողովուրդը, որքան կարելի է, ծաղկեցներ Վրաստանը, հենց նույն իսկ երկրի օգուտների համար դուք (Կովալենսկին) պետք է աշխատեք, որ Թագավորը (Գեորգին) հողերի այնպիսի զիջումներ աներ, որ մելիքների համար ամենաշահավետ պայմաններով լիներ. և որովհետև մի այսպիսի հասարակություն չէ կարող բնակության հիմք ունենալ և ընդարձակել իր հառաջադիմությունը, մինչև որ պահպանված չլինեն նրա սովորությունները և կառավարության ձևերը, որոնք հին ժամանակներից հատուկ են եղել նրան,– այդ պատճառով և ցանկալի կլիներ, որ նա (հայոց հասարակությունը) ոչ այլ տեսակ կախումն ունենար Վրաստանից, բայց միայն վասալների տեսակով, վճարելով այնուամենայնիվ թեթև հարկ Թագավորին և բաժանելով նրա հետ այն ամենը, ինչ որ հարկավոր կլինի թե ծախքերի վերաբերությամբ, թե մարդիկների գործակցությամբ երկրի պաշտպանության դեպքերում»[34]:

Վրաստանում այդ ժամանակ խռովություններ էին ծագել, և իշխան Գեորգին ևս նպատակահարմար համարեց հայ մելիքներին և նրանց հպատակներին վրաց հողերում բնակեցնել, քանի որ մելիքները կարող էին նրան զորավոր դաշնակիցներ լինել: Կովկասյան լեռնաբնակների հարձակումները մի կողմից, վրաց իշխանական տան անդամների երկպառակությունները մյուս կողմից երկիրն անընդհատ լարված վիճակում էին պահում: Բացի այդ, նման խնդրանքը համապատասխանում էր Աղա-Մահմադ խանի ավերիչ արշավանքի հետևանքով բնակչությունից նոսրացած Լոռու և Վրաստանի որոշ տարածքների հետագա տնտեսական զարգացման շահերին: Այս հանգամանքները նպաստեցին, որ մելիքների պահանջները կատարվեն: Վրաց թագավոր Գեորգիի 1800 թ. փետրվարի 29-ի հրովարտակի հիման վրա մելիքներին տրվեցին հողեր, որոնք, ինչպես երևում է 1802 թ. մայիսի 8-ի Վրաստանը գավառների բաժանելու վավերաթղթերից, հետևյալներն են. Մելիք-Ջումշուդն իր պահանջած Ղազախի գավառի փոխարեն ստացավ Շնող և Դսեղ գյուղերը, Լոռու գավառն իր սահմաններով և Բորչալուի մի մասը, բայց որովհետև Լոռին, ինչպես տեսանք, ընծայվել էր Շահամիրյանին, ուստի Գեորգին պայման էր դրել, որ այդ երկիրը կմնա Մելիք-Ջումշուդի ձեռքում մինչև Շահամիրյանի կամ նրա ժառանգների գալը, որից հետո Լոռու փոխարեն նրան կշնորհվի այլ տարածք[35]: Այսուհանդերձ հրովարտակում նշվում է, որ Լոռին տրվում է որպես հավերժական տիրույթ՝ իրեն պատկանող ողջ գյուղերով, գյուղացիներով ու հողերով[36]:

---

[34] *Ռ ա ֆ ֆ ի. նշվ. աշխ., էջ 164:*

[35] АКАК, т. 1, док. № 877; ”Кавказская старина”, Тифлис, 1872, декабрь № 2, с. 36.

[36] АКАК, т. 2, Тифлис, 1868, с. 205.

Մելիք-Ֆրեյդունն ստացավ Բորչալուի մնացած մասը, Ուզունլարը (Օձուն), Ղազախը, Մելիք-Աբովը (Մելիք- Ֆրեյդունի հորեղբայրը) ստացավ Բոլնիսն ու Դաղեթը իր սահմաններով[37], իսկ Հաճի Կալեի (Աղճի Ղալա) մոտ բնակեցված նոր գաղութները պատկանում էին Մելիք-Ջումշուդին և Մելիք-Ֆրեյդունին[38]: Այնուհետև մելիքները ձեռք բերեցին այլ հողեր այն չափերով, ինչ չափերով որ հետզհետե ավելանում էր նրանց հպատակների թիվը, քանի որ Ղարաբաղի հայ բնակչության մի զգալի մասը ևս, որ բնակություն էր հաստատել Երևանի խանությունում, գաղթում էր հյուսիսային Հայաստան՝ իր մելիքների մոտ[39]:

Մելիք-Աբովի վարկն այնքան բարձր էր Գեորգի XII-ի մոտ, որ երբ Ղարաբաղի մյուս մելիքների հպատակներից մի քանի հարյուր ընտանիք փախան Փամբակ, որոնց Մելիք-Աբովն իր իշխանության տակ առավ, և ինչի առիթով Մելիք-Ջումշուդը բողոքեց թագավորին և ետ պահանջեց իր հպատակներին, վերջինս գաղթականներին վերադարձնելու փոխարեն, Բորչալուի Խան-արխ ջրանցքը ժամանակավորապես տվեց Մելիք-Ջումշուդին, որ նա այլևս պահանջ չունենա[40]:

Ընդ որում, Մելիք-Աբովն իրեն հատկացված բնակավայրերը՝ Բոլնիսն ու Դաղեթը վերանվանեց՝ Բոլնիս-Խաչեն և Դաղեթ-Խաչեն՝ պահպանելով իր նախկին Խաչեն գավառի անունները[41]: Նա միաժամանակ իրականացնում էր քարավանապետի պաշտոնը և իր ջոկատով պաշտպանում էր Աղբյորփի գյուղի մոտակայքի սահմանագիծը[42]:

Փաստորեն Լոռին դառնում էր մի փոքրիկ Ղարաբաղ, մելիքական երկիր: Նշենք նաև, որ ղարաբաղցիների գաղթը դեպի Լոռի սկսվել էր դեռևս դրանից էլ առաջ՝ վրաց Հերակլ II թագավորի օրոք: Այդ գաղթականները բնակություն էին հաստատել Ղազախում, Շնողում, Լոռի բերդում և այլուր: 1797–1798 թթ. գաղթից հետո ևս - շարունակվել է ղարաբաղցիների գաղթը Լոռի: Այդ գաղթականներից հաստատվել են Մելիք-Ջումշուդի կառավարման ներքո գտնվող Շնող և Դսեղ գյուղերում, Մելիք-Ֆրեյդունին պատկանող Ուզունլարում և Մելիք-Աբովին պատկանող Բոլնիսում[43]:

Հարկ է նշել, որ Լոռին կառավարելն արտոնվել էր Ղարաբաղի մելիքներից առավել նշանավորին՝ Մելիք-Ջումշուդին:

Այսպիսով, Ռուսաստանն արդեն տիրել էր Վրաստանին և Անդրկովկասին: Պարսկական բռնապետությունը քայքայվում էր և տեղի էր տալիս քրիստոնեական պետության կառավարությանը: Հայ մելիքներն աշխատում էին այդ նոր պետության հովանավորության ներքո պահպանել իրենց սեփականատիրական իրա-

---

[37] АКАК, т. 2, с. 1149.

[38] АКАК, т. 1, с. 123, *Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 2, էջ 230:*

[39] АКАК, т. 1, с. 123-124; Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 37-39; *Վ. Ա վ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 400.*

[40] АКАК, т. 1, с. 1158-1163, т. 2, с. 205, *Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 2, էջ 232:*

[41] *Ր ա ֆ ֆ ի. նշվ. աշխ., էջ 523-526:*

[42] Присоединение Восточной Армении…, т. 1, с. 37.

[43] *"*Кавказская старина*"*, 1872, декабрь № 2, с. 36.

վունքներն այն տարածքների նկատմամբ, որոնք տրվել էին նրանց նոր վայրերում: Հայ հասարակական-քաղաքական գործիչները հասկանում էին, որ Անդրկովկասում հայ ժողովրդի ազատագրման հարցի լուծումը շաղկապվում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետ:

Անդրկովկաս մուտք գործելու համեմատաբար անաղմուկ միջոցը, Վրաստան ռուսական զորք մտցնելու ուղին էր: Մելիքների ու Արցախի հարցը լծորդվում էր առաջին էտապում ռուս-վրացական հարաբերությունների զարգացման ընթացքի հետ, և հայ գործիչներն անհամբեր սպասում էին այդ հարաբերությունների զարգացմանը:

Բայց մելիքների սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը նոր տարածքներում գնալով վատթարանում էր:

1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կատարվող բնակչության տեղաշարժերը, ռազմական գործողությունները, պարսկական զորաբանակների ասպատակությունները, պետական հարկերը հյուծում ու քայքայում էին ազգաբնակչությանը: Դրանց գումարվում էին վրացի կալվածատերերի, գյուղական մելիքների և այլ պաշտոնատար անձանց չարաշահումները: 1833 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին (1762–1849) Կովկասի կառավարիչ Գ. Վ. Ռոզենին գրում է. «Հաղբատի վանքը նույն անվամբ գյուղով սկզբից ևեթ պատկանում էր Էջմիածնի սուրբ աթոռին: Վրաց իշխանները, սեփականացնելով վանքի հողերը, տիրեցին ամբողջ գյուղին, եկեղեցու սեփականությունը թողնելով միայն 188 օրավար ցանքատեղի...»[44]: Լոռի գաղթած Ղարաբաղի մելիքների տնտեսական դրությունը ծանրացավ հատկապես այն պատճառով, որ նրանք սկսեցին աստիճանաբար զրկվել իրենց նախկին իրավունքներից. նախ՝ հայ մելիքներն իրենց հպատակներով գաղթել էին մի երկիր, ուր տիրում էր ճորտությունը: Մելիքները պահանջում էին, որ իրենց ժողովուրդը պահպանի իր վաղեմի ազատությունը, իսկ իրենք՝ իրենց իրավունքները, որ Վրաստանի սահմաններում, իրենց տային ազատ հողեր՝ որպես մշտական սեփականություն, որտեղ նրանք կբնակվեին՝ պահպանելով իրենց նախկին օրենքներն ու սովորությունները: Հարկ է նշել, որ Պավել I-ը վրաց թագավորին ուղղած հրովարտակի մեջ պահանջում էր չզրկել մելիքներին իրենց նախկին իրավունքներից ու իշխանությունից[45]: Բայց հրովարտակի պայմանները չէին կատարվում և մելիքները, հաճախակի հակասություններ ունենալով վրաց իշխանների հետ, ձգտում էին հետ վերադառնալ իրենց հայրենիքը՝ Ղարաբաղ: Խախտվում էին նրանց սեփականատիրության իրավունքները, բացի այդ մելիքները հաճախ ռուսական ղեկավար մարմիններին էին ներկայացվում որպես երկրորդական ներկայացուցչություն՝ կապված պարգևատրումների հետ[46]:

Այս ամենը ստիպում էր մելիքներին խնդրանքներով դիմել Անդրկովկասում ռուսական կառավարության ներկայացուցիչներին և ռազմական գործիչներին՝ ի-

---

[44] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 78, վավ. 41 բ:*

[45] АКАК, т. 1, с. 87.

[46] АКАК, т. 2, док. 388, Присоединение Восточной Армении к России, т. 1, док. № 171.

րենց իրավունքների պահպանման համար[47], սակայն՝ անօգուտ: Ի պատասխան Մելիք-Ջումշուդի խնդրանքների՝ գեներալ Պ. Ցիցիանովը 1803 թ. փետրվարի 19-ին գրում է, որ Պավել կայսեր կողմից տրված շնորհագրում նշվում է միայն այն հողի մասին, որը մելիքը խնդրել էր և որը կոչվում է Խազան, այլ ոչ թե Լոռու, և երկրորդ՝ թեև Լոռին իր շրջակայքով տրվել է Մելիք-Ջումշուդին՝ ժամանակավորապես, բայց ըստ վրացական (բարձրագույն) կառավարության վճռի, Լոռին կոչված է լինելու գավառական քաղաք, և երրորդ՝ Բորչալուի ջրանցքը, որը կոչվում է Խան-արխ, և որի մասին նշում է Մելիք-Ջումշուդը, նույնպես տրված է ժամանակավորապես:

Ծանր էր նաև Մելիք-Աբովի և նրա հպատակների սոցիալ-տնտեսական վիճակը: 1807 թ. նոյեմբերի 23-ին Հ. Լազարյանին գրած նամակի մեջ Մելիք Աբովը թվարկում է իր՝ Ռուսաստանին մատուցած ծառայությունները, իրենց վերաբնակությունը Բոլնիսում, և թե ինչպես ինքը Բոլնիսը մաքրեց թշնամիներից: Ապա Ռուսաստանին մատուցած բոլոր ծառայությունները թվարկելուց հետո նա ավելացնում է. «Ես շատ անգամ խնդրել եմ կոմսին (Գուդովիչին), որ թույլ տա մեզ՝ Մելիք-Ջումշուդի նման տեղափոխվել մեր հայրենիքը՝ Ղարաբաղ, բայց նա չհոժարեցավ, պատճառով, որ եթե մենք թողնելու լինենք այդ երկիրը (Վրաստանը), այդ ժամանակ Բոլնիսը կոչնչանա, իսկ ախալցխացիները, լեզգիները և այլ վայրենիներն ու ավազակները կոչնչացնեն Թիֆլիսի շրջակա գյուղերը: Բայց երբ որ մենք ասում ենք, որովհետև Հերակլ թագավորը շնորհել է մեզ Բոլնիս իր բոլոր հողերով, ջրերով, անտառներով և այլ պատկանելիքներով, ուրեմն խնդրում ենք ձեզ, որ այդ բոլորը հաստատեք մեր անունով: Այն ժամանակ կոմսը մեր պահանջին պատասխանում է, ասելով՝ ես չեմ կարող ուրիշների կալվածքները տալ ձեզ և դրա նման խոսքեր, ես չեմ կամենում ձանձրացնել ձեզ բոլոր մանրամասնություններով»[48]: Վերջացնելով նամակը՝ նա խնդրում է Լազարյանի միջնորդությունը կայսրի մոտ մի քանի հարցերի շուրջ, այդ թվում, որ թույլ տրվի իրեն իր հպատակներով վերադառնալ Ղարաբաղ:

Մելիք-Աբովի ցանկությունը չիրականացավ: Հետզհետե նրա հարաբերությունները վրաց ազնվականների հետ՝ կապված Բոլնիսի և կալվածատիրական այլ խնդիրների հետ, ավելի ու ավելի թշնամական կերպարանք ստացան: Հակառակ Պավել I-ին կայսեր բարձրագույն հրովարտակով շնորհած արտոնությունների, և հակառակ այն իրավունքների, որ նրանց տրվել էին Հերակլ և Գեորգի արքաների օրոք, մելիքների իրավունքները սկսեցին աստիճանաբար սահմանափակվել, ապա գրեթե իսպառ վերանալ: Այս ամենի պատճառ էին նաև Վրաստանում ռուս կառավարիչների կամայականությունները, ինչի դեմ բողոքում էին մելիքները՝ շարունակ դիմելով Ռուսաստանի կառավարությանը: Երբ Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրեյդունի մահից հետո Մանաս բեկը (Աբովի որդին) դիմեց Կովկասում գլխավոր հրամանատար գեներալ Ա. Տորմասովին՝ խնդրանքով, որ հաստատեն իր

[47] Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 52.

[48] *Նամակի բնագիրը չկա, սա ռուսերենից թարգմանվել և Պ. Երիցյանի կողմից տպագրվել է* "Кавказская старина" *³Щл³·сбхШ. п»л՝* "Кавказская старина", 1872, декабрь № 2, с. 38–39.

մելիքական իրավունքները Բոլնիսի բնակիչների վրա, նրան մերժեցին, պատասխանելով, թե ոչ Բոլնիսը և ոչ էլ այդ գավառի բնակիչները ոչ ոքի չեն պատկանում, բացի թագավորից: Թեպետ պարզ իրողություն էր, որ Բոլնիսը բնակեցված էր դարաբաղցի գաղթականներով, որոնք Մելիք-Բեգլարյանի հպատակներն էին: Հայտնի էր նաև, որ Բոլնիսը շնորհվել էր որպես մշտական սեփականություն Մելիք-Բեգլարյանին: Վրացական տիրապետության օրոք ամենածանր վիճակն ստեղծվել էր հենց Բոլնիս գյուղաքաղաքի բնակչության համար, որից վրաց կալվածատերերը սկսել էին հարկեր պահանջել, թեև, նրանք պետությանը հարկ վճարում էին: Զրկվելով իրենց բոլոր իրավունքներից՝ Մելիք-Բեգլարյանի ժառանգները և հարազատները սկսեցին հետզհետե թողնել Վրաստանը և վերադառնալ Ղարաբաղ:

Լոռին՝ որպես Ղարաբաղի մելիքների մասնավոր սեփականատիրական տարածք, երկար չպահպանեց իր գոյությունը: Ղարաբաղից եկած հայ բնակչությունը Վրաստանում (թեև գործածվում է Վրաստան բառը, բայց այդ գավառները՝ Բոլնիսը, Լոռին, Բորչալուն զուտ հայկական գավառներ էին) երկար չմնաց: Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը Հերակլի, ապա Գեորգիի մահից հետո, չտանելով ճնշումները, 1805 թ. օգոստոսին վաճառում է իրեն պատկանող Լոռվա գավառը և վերաբնակվում Ելիզավետպոլում[49]*: Մելիք-Ջումշուդի այդ քայլը հետևանք էր վրացական կառավարության և Ռուսաստանի կովկասյան գործարանային գերատեսչությունների տնտեսական ու այլ ճնշումների, քանզի Լոռին գնելուց հետո վերջիններս ավելի ինտենսիվ սկսեցին իրագործել տարածաշրջանի վերաբնակեցման իրենց ծրագիրը: Պատահական չէ, որ Մելիք-Ջումշուդից այդ հողի գնման թույլտվությունը տալիս է գեներալ Ցիցիանովը, նշելով, որ. «...Ոչ որդիք, ոչ թոռը Շամիր աղայի, որոնց տրվել էր հիշյալ հողը՝ մինչև Մելիք-Ջումշուդին պատկանելը ...մինչև այժմ չեն հայտնվել և հպատակության երդում չեն տվել, նույնիսկ հայտնի չէ, կենդանի են նրանք, թե ոչ, ինչի համար և իրենց իրավունքը՝ այդ հողը ստանալու, կորցրել են, և ոչ մի արգելք չկա այդ ամրոցը գնելու համար, ուստի առաջարկում եմ քաղաքացիական էքսպեդիցիային, Զերդ Մեծության հրամանի ուժով Մելիք-Ջումշուդից վրացական ղեկավարությանը վաճառվող հողի ամրոցի գնումը իրականացնել»*[50]*: Մելիք-Ջումշուդից Լոռին գնելու ակտը իրագործեց Կովկասի լեռնային մասի կառավարիչ կոմս Ա. Մուսին-Պուշկինը՝ գնահատելով այն 6000 ռուբլի*[51]*: Ֆինանսների մինիստրի 1805 թ. մայիսի կարգադրությամբ Մելիք-Ջումշուդին իրավունք տրվեց Լոռին վաճառել: Լոռին վաճառելուց հետո նույն՝ 1805 թ. Մելիք-Ջումշուդը թողեց Վրաստանը և իր հպատակների հետ տեղափոխվեց Ղարաբաղ՝ իր հայրենի գավառը՝ Վարանդա: Նրանք Վրաստանում մնացին մոտավորապես 12 տարի (1797–1809): Ժողովրդի մի փոքր մասը միայն մնաց Վրաստանում, որն էլ 1812 թ. դարձյալ գաղթեց Ղարաբաղ:*

---

[49] Присоединение Восточной Армении к России, т. 1, с. 27, АКАК, т. 2, док. № 384, 402; *Ե. Լ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 7:*

[50] АКАК, т. II, 1868, с. 214; Присоединение Восточной Армении к России, с. 188, 321; “Кавказская старина”, 1872, декабрь № 2, с. 37.

[51] АКАК, т. II, с. 205.

Այսպիսով, վրացական և ռուսական կառավարությունների շահագրգռվածությունը՝ վերաբնակեցնելու Լոռվա տարածքը, բխում էր վերջիններիս քաղաքական ու ռազմավարական շահերից: Տարածքը թե՛ Վրաստանի, թե՛ Ռուսաստանի համար ուներ ստրատեգիական նշանակություն՝ որպես վերջիններիս հարավային սահման, իսկ այդ սահմանային գիծը հարկավոր էր բնակեցնել աշխատասեր, հավատարիմ, ոչ ռազմատենչ բնակչությամբ, ինչպիսիք տարածաշրջանում միայն հայերն էին: Առաջնորդվելով նման նկատառումներով՝ թե վրացական, թե ռուսական կառավարությունների քաղաքականությունը տարվում էր այնպես, որ Լոռին անգամ որպես մասնավոր սեփականատիրական տիրույթ կարող էր նվիրաբերվել առանձին տոհմերի՝ առանց հաշվի առնելու երկրամասի տնտեսական, էթնիկական և այլ հիմնահարցերը:

ЛОРИ В КОНЦЕ XVIII – НАЧАЛЕ XIX В. И АРМЯНО-ГРУЗИНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ

АСМИК АМИРДЖАНЯН

Р е з ю м е

В деле освобождения Армении от чужеземного ига во второй половине XVIII в. армянские общественные деятели большое место отводили содействию Грузии, всячески способствуя также ее политическому усилению. Особенно тесными были отношения между представителями индийской армянской колонии и грузинского царского двора. По указу царя Ираклия II Шаамиру Шаамиряну была отведена в потомственное пользование провинция Лори. В указе Ираклия от 20 ноября 1797 г. определяются права и обязанности Шаамиряна и его потомков в случае переселения их в Лори. Но Шаамир Шаамирян скончался и был похоронен в Индии, а его потомки так и не переехали в Лори. В этот период неустойчивая политическая и социальная жизнь в Карабахе, а также конфессиональные гонения и угнетения коренного населения чужестранными завоевателями стали причиной того, что карабахские мелики со своим подданным народом были вынуждены оставить свою родину и поселиться в Лори. По указу русского царя Павла I от 2 июня 1799 г. карабахским меликам со своими подданными разрешается поселиться в Грузии. На основе этого указа грузинский царь Георгий XII отдал меликам в потомственное пользование провинцию Лори.

LORI AT THE END OF THE 18th – AT THE BEGINNING OF THE 19th CENTURY AND ARMENIAN-GEORGIAN-RUSSIAN RELATIONS

HASMIK AMIRJANYAN

S u m m a r y

The Armenian public figures attached great importance to Georgia’s assistance in the problem of liberating Armenia from the foreign yoke in the 2nd half of the 18th century, in every way contributing to its political

reinforcement as well. The relations between the representatives of the Indian-Armenian colony and Georgian tsar's Court were especially close. The gavar of Lori was assigned to Shahamir Shahamiryan as a hereditary domain by the decree of Herakly II. This decree (November 20, 1797) describes the rights and responsibilities of Shahamiryan and his descendants in case of resettlement in Lori. But Shahamir Shahamiryan died and was buried in India and his inheritors did not move to Lori. The unsteady political and social life in Karabakh at that period, the oppressions and persecutions of the ethnic population by the foreign aggressors made Armenian people living in Kharabakh and the meliks leave their fatherland and settle in Lori. By the decree (June 2, 1799) of Russian King Pavel I, the Armenian meliks and their subjects got permission to settle in Georgia. On the ground of this decree Georgian king George XII assigned the gavar of Lori to meliks for hereditary use.